

ծաղում: Յետոյ կժերն լցրած, ալբրի ակերից դալար խոտ փնջելով՝ վերադառնում են տուն և շնորհաւորում իրենց կերտը՝ ու կերտարի պատը. նրանք էլ օրհնում են այսպէս.

Եղակէք,
Ելէք,
Էս խոտի պէս՝
կանքնջէք:

Իսկ նորափեսաները գնում են իրենց աներոջ և նրա բարեկամների տները, շնորհաւորում պատը և մի գոյգ գուլպայ նւէր ստանում:

Նոյն օրը կեսուրը հրամայում է հարսներին, որ տան բոլոր ամանեղէնները մոտրով չորեն և մաքրեն, որպէս զի «ուտքսովէն» կերակուրներից «լացարուք - սրբացարուք» լինի:

Փորոքսիկ (Տկուռն կիրակի). — Այդ օրը պատու կանանց կիրակէն է: Առաւօտեան քաւհանան ղողանջում է եկեղեցու զանգակը: Պատու կանայք իրենց հետ նւէրներ, — մի լանգատի ցորեն կամ քֆտա, մեղր և կամ մի դոան փող ստած՝ շտապում են եկեղեցի, ուր քահանան հոգոց է ասում նրանց ննջեցեալների համար և ստանում նւէրները: Այս սովորութիւնը, սակայն, վերանալու վրայ է:

Քրառասուն մանկունք. — Միշունքի ուրբաթ իրիկունն կոչում է «Քրառասուն մանկունք»: Այդ օրը գիրդացիները մի մի աման ձէթ առած գնում են եկեղեցի և ձէթն ածում «Քրառասուն մանկունք» կոչւած տաշտի մէջ: Դա պատրաստում են այսպէս. տաշտի մէջ կիտով չափ շուր են ածում, ապա քրառասուն ծակ ունեցող տափակ խաճակ մի փայտի վրայ քրառասուն պատրոյգ անցկացնելով՝ իջեցնում են ջրի մէջ, յետոյ ձէթ են լցնում և պատրոյգները վառում: Գիւղացիները փոխաբերական մտքով բացատրում են, թէ տաշտը լինն է, իսկ պատրոյգները քրառասուն մանուկները, որոնք Ղրահեղձ չեն լինում: Նոյնպէս այս սովորութիւնը հետզհետէ վերանում է:

Խրագարարայ. — Եղակազարդին գիւղացիներն ասում են «Խրագարթար»: Եւբաթ երեկոյ ջահէլ տղերքը գնում են գիւղի ծառատանները և ուռնեու ճիւղեր կտրելով՝ տանում են եկեղեցի և դնում սեղանի առջև, որ քահանան օրհնէ: Միւս առաւօտեան վաղ գիւղացիներից շատերը շտապում են եկեղեցի, ուր, ղեռ պատարագ չափած, քահանան օրհնում է ուռնեու ճիւղերը. անմիջապէս բոլոր երեխաները մի մի փոքրիկ ուտի

ճիւղ առնելով՝ մի քանի խմբեր են կազմում և տնից տուն շրջելով երգում.

Երազ գարթար, ծառին գարթար,
Սև եզին սև սամաթէլ.
Կարմիր եզին նօզ ու կօճաք,
Հնկէրս ընգաւ ծօֆն ու ծառու.
Բաշին էկաւ կեռ-կեռ կտուց.
Ապրի ձեր դաքվօրցուն,
Տվէք իմ էրկու ձուն:

Տնեցիները սովորաբար ձու, չամիչ, աղանջ կամ փշատ են տալիս:

Ժամերգութիւնից յետոյ օրհնած ճիւղերը բաւժանում են գրեթէ բոլոր ժամաւորներին, որոնք տուն տանելով՝ դնում են պատերի արանքները, որպէս զի տունն օրհնւած մնայ և վտանգ չպատահի:

ՎԻՆԵՆԱ ԱՐԱՄ ԵՐԵՍԵԱՆ

(Շարունակելի)

ԼԵԶՈՒՍՅՈՒՑԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԵՍ

Ա

Խ Ն Դ Ի Բ Ը

Հրատապ պայքարի և հայկական պատմութեան էջերուն մէջ արձանագրելի օրեր էին անոնք, 1922-ի Յունիսի օրերը, ուր կոստանդնուպոլսի Հայովթիւնն աւելի մօտէն կը ծանօթանար հայ Ոստանին մէջ հաստատուած նորահնար ուղղագրութեան, զոր այլանդակ կը գտնէր: Հոն Հայ Արուեստի Տունը փութաց կազմակերպել հրապարակային մեծ վիճարանութիւն՝ այդ խնդրին վրայ, արդիւնքը հաղորդելու համար Երևանի, — զոր սակայն խափանեցին վերահաս քաղաքական պատահարները: — Կատարուեցան երկու մեծ գումարումներ, որոց մէջ խոնձձ էր մեծազոյն մասն արևմտահայ և հոն ներկայ. կովկասեցի մտաւորականութեան, մի քանի հարիւր հոգի, հզօր ու հանդիսական բողոք մը

բառնալու իւր բազմաթիւ ճառախօսից բե-
րանէն, որոց հետ միացուց իւր ձայնը
մասուուն ալ:

Երկուք էին գլխաւոր բանախօսները,
որոց վիճակուած էր սկսիլ ու փակել վի-
ճաքամտութեանց շարքը: Ի նպաստ նոր
ուղղագրութեան խօսեցաւ Ուս. Ա. Խա-
չատուրեանը, որ ինքնայոժար ստանձնած
էր իւր դերը: Իսկ հետոյն պաշտպանու-
թիւնն ինձ յանձնելու պատիւն ըրած էր
Հ. Ա. Տունը: Մեծարեան զրութեան ինձ
շնորհած փաստերը, և միանգամայն ուն-
կընդորացս գաղափարակցութիւնը՝ բնակա-
նապէս պիտի զօրացնէին իմ դերս, շա-
հեցնելով ինձ հասարակաց ջերմ հաւանու-
թիւնը, և վկայելով՝ թէ Արեգեանի հան-
ճարեղ գիւտն ամբողջութեան զատապարտուած
էր ազգին ամբողջութեան համար: Անոր
հաճութիւն ցոյց տուին, յարգելի պաշտ-
պանէն զատ, երեք հոգի, որոց մին, որ
խօսեցաւ եւս, յետ վերջին անգամ զիս
լսելու, մօտեցաւ և ըսաւ՝ թէ համոզուժը
ըրջած էր աւանդական ուղղագրութեան
կողմ: Իսկ միւս պարոնները քիչ վերջ
Երեան գնացին: Հայ գրագիտաց կողմանէ
համակրութեամբ ընդունուեցան յետոյ նոյն
խնդրոյ մասին հրատարակած երեք յօ-
դուածներս ալ:

Ուս. Խաչատուրեան երևանեան նորու-
թիւնը պաշտպանելու ժամանակ՝ վերա-
պահուեմեր ըրաւ անոր ինչ ինչ կէտերու
մասին, զորս հակառակ կը գտնէր հայրենի
լեզուական օրինաց: և այսու կը հաստատէր՝
ինչ որ հրապարակաւ զլացաւ ինձ ընել,
թէ ուղղագրութեան զործը չէր յանձնուած
ճարտարագոյն հայկաբանից ձեռքը, — այս
բառիս արեմտահայ իմաստով, որ կը
տարբերի արեւելեանէն:

Այդ նորաձեւութիւնը կու գար վաւե-
րացնել ու տալ ազգին՝ Երեանի Ժողկո-
միադարձատի ծանօթ ղեկորտը, յանձնուած
նոյն կոմիտարիատի Արդիւնակակն կեճ-
տրոնի հակողութեան, — որ հայ ուղղա-
գրութեանէն զատ՝ մեր լեզուի բառարանին

նկնորմն ալ վճռած էր, — իւր պահանջած
փոփոխութեանց մէկ մասը «ժամանակա-
ւորապէս» խնայելով գրագիտաց. իսկ
ամբողջութիւնը ստիպողական ընելով դը-
պրոցաց մէջ: Կը խորհէի՝ թէ այդ աշա-
կերաններն որքան պիտի բաղձային արդէն
չափահաս գրագէտներ լինել: Իսկ թէ հին
զրութեան կառչող գրագիտաց դէմ ինչ
օրինական սաստիք սահմանուած էին, ան-
ծանօթ կը մնար: Շատ բաներ ըսուեցան
ու զըսուեցան այդ մասին այն օրերուն:
Բայց մէկ բան ստոյգ է՝ որ խորհրդային
Հայաստանէն ելած ամէն գիրք ու թերթ
նոր ուղղագրութիւնը կը կրէր միաձույլ և
անողոք համաձեւութեամբ մը: Օրէնքը հոն
կը կատարէր իւր պաշտօնը բովանդակ
խստութեամբ. զգացնելով՝ թէ կենաց և
մահու խնդիր էր այն մեր նորատունկ կա-
ռավարութեան համար:

Բան մը սակայն, որուն մեր խելքն
ի զուր կ'աշխատէր ու ղեռ կ'աշխատի
հասնել, այն է՝ թէ պետական վճիռ մ'ի՞նչ-
պէս կարող էր ելնել յանկարծակի, իրեն
և Աստուծոյ միայն յայտնի օր մը, հիմնու-
մին փոխել լեզուի մ'ուղղագրութիւնը:
Ուղղագրութիւնը փոխողը կրնայ ուրեմն,
եթէ ուզէ, լեզուն ալ փոխել կամ նոր
լեզու մը ստեղծել: Մեր այդ յարգելի
կոմիտարները մոռացած էին՝ թէ լեզուն
պետութեան մը ստացուածք չէ, այլ հա-
սարակութեան. և թէ զայն կերտելու կամ
փոփոխելու իրաւունքը՝ բնութեանէն տրուած
է ազգերու և ժամանակին, ոչ անհատնե-
րու, Հայիրուս համար ինչ խորթին ու
խորհրդաւոր անուն ալ կրնն այդ անհատ-
ները կամ պաշտօնարանը: Ո՛չ մէկ ընդ-
հանուր գեկոյց, ոչ մէկ կողմ հայ մտա-
ւորականութեան, որոյ ստուար և հայ
լեզուի մէջ աւելի երկած մասը կը նստէր
Սեւ ծովէն ասդին, մինչև Արիւնականէն
վեր ու մինչև ի Դանուբ, և անոր մշա-
կութեան մէջ զարուար արժանիքներ ալ
զիզած էր: Այլ չոր ղեկորտ մը մեզ կը
բերէր պարզապէս 1500 տարիներու ուղ-
ղագրութեան մը հրամայական ու յապու-
րակի աւերը:

1. Ժողովրդի ժայն, 26, 27, 28 ՅԼԻ

Թէ այդ խնդրոյ մասին Երևանի հետ սակարկութիւնը ներքիլ՝ էր այն պահուն, վճիռը յուսոյ նշոյլ մը չէր տար մեզ: Հետեւաբար մեր վիճարանական պայքարին յաջորդեց արհամարհոտ լռութիւն մ'աւանտեան Հայութեան կողմանէ, մերթ ընդ-միջուած թեթեւ սլաքներէ՝ նոյն ուղղագրութեան դէմ, սպասելով որ ժամանակը ցոյց տար կատարուած գործին անտեղութիւնը: Ժամանակը կատարեց իւր դերը. և հիմայ ճիգերը տեսնենք՝ անպատեհութիւնը սրբագրելու ուրիշ անպատեհութեամբ մը: Եւ որովհետեւ այս ալէկոծութիւնը հետեանքն է ինչ ինչ կարևոր սկզբունքներու անծանօթութեան Երևանի մէջ, պէտքը կը զգամ անգամ մ'ալ դառնալու շեշտելու իմ երբեմն տուած փաստերս այդ և այդպիսի յեղեղովկ ձեռնարկութեանց դէմ. թերևս կարենամ օգուտ մ'ընծայել Երևանի մէջ բռնացած գրափոխութեան տենդի բուժման:

F

ԱՆՏԵՂՈՒԹԻՒՆՔ

Մեր ծանօթ վիճարանութեան մէջ Ուս. Խաչատուրեանը շատ բնական կը գտնէր այն ժամանակ եղած կարգադրութիւնը, նկատելով՝ որ լեզուները փոփոխական են միշտ, իրենց ուղղագրութեամբ հանդերձ. թէ եւրոպական ազգերէ ոմանք ալ նոյնն ըրած են արդէն. թէ մեր հին գրչագրաց մէջ ևս նոր փոփոխութեանց հետքերը կը նշմարուին. և թէ բուն ժամանակն էր այդ նորութեան կամ նորոգութեան, իմ պատասխանս պարզ է և որոշ, զոր ընդլայնած ու լրացուցած՝ կ'ամփոփեմ հետեւեալ կէտերու մէջ:

1. — Լեզուները և ուղղագրութիւնը փոփոխական են, ստոյգ է, բայց ժամանակի շրջանին մէջ, յուշիկ և ինքն իրեն, ինչպէս կ'երիտասարդանայ մանուկը, կամ կը ծերանայ երիտասարդը, և ո՛չ թէ հրացանին ու սուրին յեցած պետական ուժով: Փիտութեան, ո՛չ թէ քաղաքականութեան ձեռքով:

Ուրիշ ազգերէ ոմանք վերածեցին իրենց ուղղագրութիւնը չափով մը. բայց ուրիշներ ալ անփոփոխ պահեցին, իւրաքանչիւրն իւր յատուկ պահանջին համեմատ, առանց որ մէկուն օրինակը ստիպողական դառնայ միւսին: Անգղիացիք ու Գաղիացիք դեռ կը պահեն իրենց աղաւաղեալ ձայնատրոնները, միաձայն երկարաբրանները, և ներքին ու մանաւանդ ծայրի մէկէն մինչև երեք անձայն գրերը, թէ և ունին գիտնական վճուատու կաճառներ, որոնք անգամ իրենք զիրենք տկար կը զգան տիրող սովորութեան հանդէպ, և վարանելով կը մօտենան խնդրոյն:

Ոչ ալ ի՞նչ մը գիտաւորային երեւումը փոխանակ յի՛ հին թերթի մը մութ անկեան մէջ, կամ յի՛ մը՝ փոխան ուրի՛ ուրիշի մը մէջ, կամ յի՛ մը յապաւումը թղթի կամ քարի մը վրայ, գրուածոց՝ որոնք բանիմաց մատենագրաց ձեռքէն չեն ելած, այլ սովորական և յաճախ սովորականէն շատ վար մահկանացուներու, որոնք՝ ինչպէս նաև գիտուններն անգամ՝ ենթակայ էին սխալելու, — ինչպէս յաճախ կը սխալինք ակամայ ժեռ իսկ՝ հակառակ մեր գիտութեան ու կամքին, առանց խորհելու կամ պահանջելու՝ որ մեր սխալներն ապագայից համար ուղղագրութեան օրէնք հանդիսանան, — չեն կարող հիմն և առաջնորդ կազմել նորակերտ ուղղագրութեան մը, երբ անոցմէ յառաջ, անոնց հետ և անոցմէ վերջ կը տեսնենք ու կ'ապացուցանենք անընդհատ շարունակուած ընդհանուր օրէնքը, որ կը հաստատէ՝ թէ իրեն հակառակ երևույթները դիպուածներ են, շեղումներ են լոկ, որքան ալ յաճախեալ լինին, անմիաբանք նոյն ինքն իրարու մէջ և յաճախ նոյն իսկ մի և նոյն գրչին ներքեւ: Հակառակ պարագային՝ մեսրոբեան դրութիւնն իրենց առջև չեցած անյայտացած պիտի լինէր, և մեք՝ կարծեցեալ նոր ձեւը պիտի ժառանգէինք հիմայ աւանդութենէն:

2. — Մեսրոբեան դրութիւն, շեղումներ, դիւրին է ըսել, (կրնան խորհիլ ոմանք). բայց ո՛վ պիտի հաւատտէ՝ թէ

ուղղագրութեան սովորական ձևը Մ'սերո-
բայ հաստատածն է: Մ'եր վաւերական շատ
բարձր թուականով գրչազրբը շունինը, և
Մ'սերոբայ ու մեզ հասած գրչազրաց մէջ
կան երկար դարեր: Չէ՞ կարելի՞ որ այդ
ժամանակամիջոցին նախնական ուղղա-
գրութիւնն այլափոխուած լինի՞ յաւելուա-
ծով անձայն յին, էին և այլն:

Ասոր պատասխանելու համար պէտք
չունինք երկար խուզարկութեանց կամ
քերականական փաստերու: Հնագոյն գրչ-
չազրաց պակասը կը լրացնեն հնագոյն
արձանագրութիւնը, անոնց չափ և աւելի
պերնախօս, որոցմէ երեքը միայն կը շա-
տանամ յատաջ բերել հոս՝ ըստ իրենց
հարազատ ընթերցման, զոր կու տայ Գար.
Վ. Յովսէփեան, անոնց լուսանկարչական
պատկերաց հետ՝:

Առաջինն է Տեկորոյ եկեղեցւոյն յիշա-
տակարանը, որ է այսպէս. «... պիսկո-
պոսի եւ Տայրոնի Տեկորոյ վանաց երիցու
եւ Մաննայ հազարագետի Ուրանայ հո-
տոյի, որ եւ հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն
Յոհանու Հայոց կաթողիկոսութեան եւ Յո-
հանու Արշարունեաց յիւր բարեխաւսու-
թիւն և բոլոր ազգիւն եւ ամուսնի և որդե-
կաց եւ սիրելեաց, եւ Սահակ կամարական
շինեաց զայս վկայարան սրբոյ Սարգսի»
(էջ 5): Հ. Ալիշան նկատելով պատմական
անուանցը զուգադիպութիւնը, զայդ կը
հանէ Յովհաննու Մանդակունւոյ օրերը,
այն է Ե դարու վերջերը՝:

Երկրորդն է Ներսէհ կամարականի յի-
շատականքնը թաւնոյ եկեղեցւոյն մէջ՝ է-
ջ 3-րդ: «Ես Ներսէհ ապուհպատ պա-
(որիկ Շիր)ական եւ Արշարունեաց տէր
շինեցի զեկեղեցիս յանուն սրբոյ աստուա-
ծածնին ի բարեխաւսութիւն ինձ եւ Շու-
շանայ ամուսնոյ իմոյ եւ Հրահատայ
որդւոյ մերոյ» (էջ 7):

Երրորդն է Կոմիտաս կաթողիկոսի ար-
ձանագիրը Ս. Հոփսիսմէի մէջ՝ նոյն դա-

րէն. «Ես Կոմիտաս եկեղեցագան Սրբոյ
Հոփսիսմէի կոչեցայ յաթոռ սրբոյն Գրե-
գորի, շինեցի գտանոր սրբոց վկայիցս
Քի.» (էջ 6): Եւ նոյն հայրագետի յո-
րինած շարականն ի պատիւ Հոփսիսմեանց,
այրուբենի տառից թուով ու սկզբնաւորու-
թեամբ, եօթներորդ տունը կը սկսի է գրով.
«Է՛ զարմացումն և ի վեր քան զհրաշս»:
Ահաւաստիկ ուրեմն մեսրոբեան ուղղա-
գրութիւնը, սկսուած արձանագրութիւն նոյն
ինքն Մ'սերոբայ դարէն, իւր յով անուանց
ու բայից ծայրը, և իւր իով բառի մէջ
և առանձինն իբր էական բայ, Ահաւաստիկ
հասարակաց և հարազատ ուղղագրութիւ-
նը, զոր կու զար յեղաշրջել երեւանեան
վճիտը:

Մ'սերոբեանին միակ տարբերութիւնն
այժմեան սովորականէն՝ և գրի ներկա-
յութիւնն էր մի քանի բառերու մէջ. որով
հին երկաթագիրը կանոնաւորապէս կը
գրեն թե՛ առանձինն ու բարդութեանց մէջ,
ինչպէս և երկրորդ լծորդութեան բայից
հետեւալ դէմքերը, եթ, եթիւ, եւաք, եթք,
եթիւ, և զորս միջին դարն իսկ վերածեց
արդի ձևին: Իսկ բոլոր միւս շեղումներն
անուշազրուցական կամ տգիտութեան ար-
դիւնք էին, ինչպէս ըսի, կամ անհաստակ
փորձեր, և չեն կազմած ընաւ հասարա-
կաց սովորութիւն: Այդ շեղումներն ի մի
զումարելով Արեղեանը, և խումբ մ'ալ իւր
ուղեղէն բարդելով անոնց վրայ, շինեց
տեսակ մը դանիելեան զանգուած՝ որ
պայթեցուց Բարեւազուց վիշապը, և իրած
կը մնայ միշտ հայ ազգի կոկորդին մէջ:
3. — Ժամանակն էր այդպիսի փոփո-
խութեան, պէտք էր արդեօք, և օգտակար
թէ փնասակար պիտի հանդիսանար: Հե-
տագայ պատասխաններս, զորս պայքարի
օրերէն դիւրի ազգին առջև, ցոյց տուին ար-
դէն, և փորձն ալ եկաւ հաստատելու: Կը
կրկնեմ:

Մ'եր Հայերս տասնուհինգ դարերու ճոխ
մատենագրութիւն մ'ունինք՝ գրարար և
աշխարհաբար լեզուներով, որ մեր մտաւոր
անունըն ու պարծանքը և ազգային գոյու-
թեան հիմը կը կազմէ պատմութեան ու

1. Գրչապատմութեան արուեստը հին Հայոց մէջ. Վ. Գրչապատմութեան 1918,

2. Շիրակ, 182:

մարդկութեան առջև, և զոր պիտի մօտեցը-
նենք նաև մեր ուսանողութեան մատաղ
ըրթներուն ու մտքին: Քաղաքակիրթ հին
ազգերը պէտք է կապուած մնան միշտ
իրենց մտաւոր անցելոյն հետ, որովհետեւ
անով պիտի գիտնան ու գիտցնեն՝ թէ
իսկապէս փայլուն աւանդութեան մը ժա-
ռանգորդներն են իրենք, և ոչ անգիր-
բրդեր կամ գնչուներ, և անով պահանջին
իրենց գոյութեան իրաւունքը: Բայց երեւա-
նեան ուղղազրուութիւնը պատուար մը կը
դնէ անցեալ մատենագրութեան և ապա-
գայ սերնդին մէջ: Ինչպէս պիտի անցնի
սա այդ պատուարին վըայէն: Բոլոր նախ-
ընթաց ստուար մատենագրութիւնը և
բոլոր բառարանները վերստին տպագրել
նոր ուղղազրուութեամբ, այդ անկարելի է:
Երեւանի պետութեան ամբողջ հարստու-
թիւնը չպիտի բաւէր. և միւս կողմէ մա-
տենագրաց հոգին պիտի բողբոջէր ազոր
դէմ՝ իբրեւ սրբապղծութեան մը:

Եթէ չենք կարող ուրանալ մեր ան-
ցեալը, և ոչ նոր ուղղազրուութիւնը հաշ-
տեցնել անոր հետ, ի՞նչ կարող էինք ընել
ուրեմի: Ուրիշ հնար չկար, բայց ինչ որ
արդէն երևանեան հրահանգը կը սահմա-
ներ. « Հին քնագիրների հրատարակու-
թիւնների մէջ պահել հին ուղղազրուութիւ-
նը, իսկ բարբառների գաւառների մէջ՝
հեղինակների գործածած ուղղազրուութիւ-
նը »: Հետևաբար ուսուցիչները հարկա-
գրուած են նաև հայ ուսանողութեան սով-
որեցնել երկու ուղղազրուութիւն միանգա-
ման, ինչպէս կը տրամադրէ նոյն վճիռը.
այսինքն մէկ ուղղազրուութեան լուծը թե-
թեցնել ջանալու ժամանակ՝ կրկին լուծ
դնել անոնց պարանոցին վըայ: Եւ այս-
պէս անոնց գլխին մէջ խճողել խառնա-
կոյտ զանգուած մը հնի ու նորի, կրկի-
նածեւ բառերու, աւելի ու պակաս տա-
ռերու. ինչպէս ղզորմելի և վոզորմելի,
յոյս և ձոյս, ամթթ և ամրթ, արդոյք և
արդեօք, երկինք և յերկինք, տեր ու տեր,
թիւ և թիվ, նուշը ու նվիր, և ուրիշ
բիւր հակասութիւններ. վորբալի վիճակ
մը վերջապէս: Ահաւասիկ ինչ որ կրնա-

յինք շահիլ երեւանեան վճռէն՝ ընդու-
նելով զայն:

4. — Նոյնը պիտի պատահէր ծագ-
կաքաղ գրեցրու մէջ և կոչույթներ ընելու
ժամանակ. կրկին ուղղազրուութիւն մի և
նոյն հատորի մէջ, իսկ եթէ փորձուէինք
բոլորը նոր ոճով գրել: Ինչէր պիտի ու-
նենայինք, մանաւանդ զբարար կտորներու
մէջ: Ձոր օրինակ, յիմև պիտի դառնար
տան մը յիմև. — յամ՝ սոխի կամ
խստորի համ պիտի տար. — յոյր՝ քա-
րայրէն պիտի լինէր նոյր կամ ծնող. —
յԱստուած՝ պիտի իջնէր ակոռէն և դառ-
նար հաստված կամ արարած. — յեղոյ՝
որ է շըջի կամ փոխել բան մը ուրիշ
բանի, զայն նեղոյ կամ թափել պիտի
տար. — փոխանակ յոյս (լսեցի) պատմա-
կանին, լվա (յոյս) հրամայականով լուանալ
պիտի տայինք: Եւ ուրիշ նման հազար տա-
րօրինակութիւններ:

Նոյն անտեղութիւնն ու շփոթութիւնն
անխուսափելի էր նաև աշխարհաբար լե-
զուի մէջ: Եւ երբ տեղ մը գրուած գտնէինք
& համր լեզու » բացատրութիւնը, պիտի
ստիպուէինք հարցնել Երեւանի կոմիտա-
րիատին, ծանրաբաժն (յարև) իմանալու
ենք. թէ մունջ. — հարկի Երեւանի պե-
տական զանձատան մէջ որոնելու ենք,
թէ մեր աղքատիկ տներէն ներս (յարկ).
— մեր հոր մասին խօսելու ժամանակ՝
արդեօք ջրհորի՝ հետ է մեր գործը թէ ծնու-
ղի. — երևանեցի պարոններէն միոյն հաս-
ցէին կարգալուծ հաշոյ մակդիր, ինչպէս
պիտի զատէինք ադոր բառի նշանակութիւ-
նը (յարտ) ձախորդէն. — հետ՝ գործողու-
թեան մը վեճը (յետ) թէ զուգընթաց կը
նշանակէ. և այլն:

Եւ այս խառնակութիւնը հետևանք պի-
տի լինէր հայ բաւարանի յեղաշրջութեան,
որով բառերու մեծ խումբ մը կը ջնջուէր
նոր ուղղազրուութեամբ, և անոնց փոխարէն
կը շատնային բազմաթիւ բառերը. ինչ որ
կարևոր լիսա մը կը կազմէր նախորդաց
վըայ:

Միթէ բազմաթիւ բառեր չունինք ար-
դէն, պիտի ըսուի, թէ մեք և թէ ուրիշ

ազգեր: Այո՛, ունինք. բայց բազմանիշ բա-
 ուերու հարստութիւնն՝ աղբատութիւն է
 լեզուի մը համար. աւելի աշխատութիւն
 կը պահանջէ հասկանալու. պատճառ կը
 դառնայ մթութեանց ու թիրիմացութեանց,
 և զրոզներու բացատրութեանց թո՛չքը կը
 կաշկանդէ ու կը կասեցնէ՝ երկդիմութիւն-
 ները խաբանելու ջանքերով: (Օրինակի հա-
 մար՝ եթէ փոխանակ ցորեն, հաճար, գարի
 և վարսակ բառերուն՝ ունենայինք ցորենը
 միայն, որ իւր վրայ կեղերոնացնէր չորս
 արմտեաց իմաստները, և կամ եթէ չու-
 նենայինք ազգականութեան ու ինամու-
 թեան ալլազան կոչումները, ուսկից զուրկ
 են եւրոպական լեզուները, հայ բարբառն
 աւելի ճո՛ր պիտի լինէր՝ թէ աղբատ,
 աւելի յստակ՝ թէ իրանակ, իրեւանեան
 ուղղագրութիւնն այս կողմանէ ալ կը տկա-
 րացնէ և մեծապէս կը խանգարէ մեր
 լեզուն:

Ե. — Աշխարհաբարը, դատրիկը զբա-
 րարին, կը կարօտի տակաւին ու պիտի
 կարօտի միշտ անոր մայրենի օժանդակու-
 թեան, ինչպէս եւրոպական նոր լեզուները
 յունականին կամ լատիներենին: Գրա-
 բարն է՝ որ պիտի շնորհէ մեր խօսուն
 լեզուին հարստութիւն, կորով, սոհմային
 նկարագիր, գիտական բառերու յարաճուն
 մթերք: Ռուսերէնը չի կրնար մեր նախ-
 նեաց բարբառին տեղը բռնել ու գոհացնել
 զմեզ. կոմիսարիատը, ղեկընտը, սեֆորմը՝
 իրենց սարօքը՝ պիտի մնան մեզ համար
 խուժողոժ ու անհասկանալի տարրեր, ու-
 բոց անձրեւումը հայերենի մէջ՝ կասկած
 կու տայ ինձ՝ թէ իրենց մուրացիկներուն
 համար ալ պայծառ լինելու չեն անոնց
 իմաստները, որով կը հարկադրին զանոնք
 կոչել օտար ձայներով: Եւ որպէս զի
 մեք կարենանք ըմպել մեր հարազատ
 աղբիւրէն, հարկ է պահել անոր հետ
 մեր ուղղագրական զօրը, որոյ խզումը՝
 պիտի գատէր զմզ մակէ, խորթացնե-
 լով զայն, և անկարելի դարձնելով անոր
 արմատներուն բարդութիւնն ի նպաստ նոր
 լեզուին, որ այսուհետեւ իւր սնունդը պիտի
 մուրար օտար լեզուներէն, և անոնց մէջ

ալ պիտի խորատուզուէր ու կորնչէր՝ ի միաս-
 մեր ազգային գոյութեան:

Ե. — Յիշեցի բառերու բարդութեան
 խնդիրը, որ լեզուագիտական տեսակետով
 մեծ կարևորութիւն ունի: Որովհետև վայ-
 րենի երկիրներուն անձանօթ, բայց ցա-
 զարակիրթ աշխարհաց մէջ կայ և հար-
 կաւոր է լեզուներու կազմախօսական ու
 համեմատական գիտութիւնը, որ հաստա-
 տուած է բարբառներու և անոցմէ անբա-
 ժան նշանագրաց բնախօսական յեղաշըր-
 ջութեանց, և ուրիշ լեզուներու հետ կա-
 պակցութեանց վրայ: Արդ ըստ այդ գի-
 տութեան՝ արմատները բարդուելու կամ
 ամանցուելու ժամանակ՝ ինչ ինչ ձայնա-
 ւորներ կը փոխուին՝ հայ լեզուի հիմնա-
 կան օրինաց համեմատ:

Աղոնց կարգէն է և է տառը, որով
 «գէտ կամ սգէտ» բառերէն յառաջ կու
 գան «պիտուն, գիտութիւն, տգիտութիւն».
 այսպէս և «տէր» կու տայ «տիրել, տի-
 բական» և այլն: Ինչ հակառակն անփո-
 փոխ կը մնայ և գիրք. «մեծ – մեծանալ,
 վեր – վերանալ, ծեր – ծերութիւն»: Աւելի
 ցայտուն համեմատութիւններ ալ կան. «սե-
 րը» յառաջ կը բերէ «սիրել, սիրելի»,
 իսկ «սերը՝ սերել, սերունդ». և ոչ թէ
 երեւանեան իշխն, այլ մեարթեան էշին
 կը պարտին իրենց զայրութիւնը... Նայիրի
 «իշալաբները» և «իշերգակները»: Այս
 արմատական տարբերութեանց ծանօթու-
 թիւնն անհրաժեշտ է թէ հայ գիտնոց,
 որոնք պէտք ունին հետ գհետէ նոր սո-
 տական կամ զրական բառեր կերտելու,
 և թէ հայ ուսանողաց՝ որոնք իրենց սոհ-
 մային լեզուին կազմախօսութեամբ աւելի
 կամ նուազ զբաղելու՝ քննելու՝ տեղեկա-
 նալու պարտք և իրաւունք ունին: Իսկ
 արդ և և է տառից զանազանութիւնը ջըն-
 ջելով և անոնց առջև դնելով յիշեալ
 զոյգէն զանգուած միակ սեր արմատը, և
 ասկից ծագեցնելով «սիրել և սերել» կըրկ-
 նակ ձևերը, արդի լեզուն պիտի մատնուի
 անիմաստ և ազճատ երևոյթներու և վի-
 ճակի մը, ուր այլ ևս գործ չունի կազ-
 մախօսական գիտութիւնը: Եւ միանգամայն

հայ լեզուն անատակ պիտի դառնայ նոր բարդութեանց ու բարզաւաճման, որոք համար անհրաժեշտ է կազմախօսական գիտութիւնը:

Եւրոպական օգիրն ընդունուեր է միջին դարուն, փոխանակելու համար հին սեր, որ այդ շրջանին օր ձայնն առած էր: Եւ այդ էր իւր միակ պաշտօնը. այնպէս որ մեք զայն տեսնելով «Օր, ընտանեօք, արդեօք» և այլ բառերու մէջ, իսկոյն կը յիշենք աղոնց հնագոյն ձեւերը, «սեր, ընտանեւաւը, արդեւաւը»: Իսկ մեր արդի տգէտ գիտնականները զայն կը գործածէին նաև եւրոպական օրն դէմ փոխանակելի: Երևանեան ուղղագրութիւնն այդ զեղծման առաջին առաւ ուրիշ զեղծմամբ մը, ընդհանրացնելով յի գործածութիւնը, և իսպառ ջնջելով օ տառը: Բայց այս երկրորդ զեղծման ալ չի ներքի լեզուագիտութիւնը, որ կ'որոնէ լեզուական ձևերու ծագումը: Երբ կը տեսնենք «օր և սեր» բառերը, կ'ըսենք. օրին մէջ փակուած աւն է՝ որ կը բացուի ստոր սեռականին մէջ: Սակայն երբ տեսնենք երևանեան որ գրութիւնը (փոխան օրի), և անոր կից սեր, անիմաստ կը գտնենք աղոնց կապակցութիւնը: Վասն զի ոչ երբեք ու և ալ կարող են քերականօրէն փոխանակել զիրար, բաց ի միջնադարեան ինչ ինչ շեղումներէ, ինչպէս «քող ու քող (քուղ), սիրող ու սիրթ» և այլն, որոց երկրորդ ձևերը հետևանքն էին սեր նոր ձայնին յի հետ շփոթելուն:

Այսպէս նաև բնաւ կազմախօսական համեմատութիւն չկայ երևանեան «բացված ու բացուած, կազմվիլ ու կազմուծվուծ» և այլ նման գրութեանց մէջ. և «լեզուն և բազմալեզվյան» այնքան աղերս ունին իրարու հետ՝ որքան հայերէնը ՔԸԸ-դերբնի: Այս և այսպիսի փոփոխութիւնք կոպիտ և անհերքելի խանգարումներ են հայ լեզուագիտական օրինաց առջև:

Հ. Ա. ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

Գ Ր Ա Կ Ա Ն

ՊՈՒԼԵՆՈՍԻ ՎԵՐԳԻԼԻՈՍԻ ՄԱՐՈՆԻ

Հ Ո Վ Ո Ւ Ա Կ Ա Ն Ք

□ ◻ ◻ ◻

ԵՐԿՐՈՐԻ ՀՈՎՈՒՆԵՐԳՈՒԹԻԻՆ

Պ Ա Լ Ե Մ Ո Ն

Նախ բամբակէ Մեծալիսու և Դամասու Գովիւն Սիրուն իրարու հետ. և սպա մրցաւք երգի, յետ որու վճիռ Պալիմոնի: Այս երգը դատարարէն առաւ իր ամուրը. և կր իսրթուի որ Դամասասը Վիրգիլիոսն ըլլայ, և Մեծալիսու՝ իր Յախսմծորդ Սիրէն սին:

Մեծալիսու, Դամասու, Պալիմոն

ՄԵՆԱԿԱՍ

Այս հօտն՝ ըտէ՛ ինձ, Դամասոս, որ՞ն է, Միլիթէ՞:

ԴԱՄՍԱՍ

Ոչ, Եգոնինն է. Եգոն

Բըշիկ մ'առայ էր որ յաճնեց զայն ինձի:

ՄԵՆԱԿԱՍ

Ո՛վ ոչխարներ, թշուառական դու միշտ հօտ, Մինչդեռ նա ինք կը դարպասէ Նեէրան, Որ մի՛ փոցէ քան զինքը զի՛ս նախիրտէ: Ժամը երկու անգամ հովին այս օտար Կը կըթէ հօտը քամելով մաքրինըն Եւ գողնալով գանձերէն կաթն իրենց մօր:

ԴԱՄՍԱՍ

Եւ սակայն այդ բաները դուն զգուշացիր Մեղադրելէ մարդերուն շատ խտութեամբ: Գիտենք թէ ո՛վ ըզքեզ... Խոչնդը ծուռ ծուռ կը նայէին՝... և թէ ինչ սուրբ տեղոյ մէջ: Բայց ժպտեցան Յաւերժարտները ներող:

ՄԵՆԱԿԱՍ

Ժպտեցան այն առեն կարծեմ՝ երբ տեսան

1. Նախանձելով իբր թէ անոնց արժանքներուն

